Հրանտ Մաթևոսյան

Մեզ սահմանադրություն է պետք ճանապարհ անցնելու և տեղ հասնելու համար

Սահմանադրությունն անհրաժեշտ է, որովհետև աչքիս առաջ բաներ են կատարվում, որ հանրապետությունը բերում են աղետալի վիճակի ու ոչ ոք պատասխան չի տալիս դրանց համար: Սահմանադրությունն է ի վերջո պաշտոնյաներին կարգի հրավիրելու: Մեկուսացած հանրապետություն անհնար է պատկերացնել, որտեղ ունենայինք զուտ մեր Սահմանադրությունը ու գործի դնեինք: Ժողովուրդների առաջընթացի հետ սա համաքայլ է, Ռուսաստանի, Եվրոպայի երկրների հետ համաքայլ է:

Հույսը նախապես մարդու ի ծնե բարոյական լինելու հակվածության վրա էր. դարձյալ դրա վրա է, բայց անզսպությունը, ինչ-որ հոգեվարքային մթնոլորտը, հոգեվիճակն այս ժողովրդին պարտադրեցին բաներ, որ չպիտի ուզենայի տեսնել: Իհարկե, իմ ուզելով չէ, բայց կարելի էր և չանել Սահմանադրությունը, օրենքը թող լինի, որովհետև օրենքի առջև պատասխանատու ենք բոլորս՝ նախագահից սկսած մինչև վերջին քաղաքացին: Օրենքից ես չեմ վախենում: Իմ եղբորից վախենում եմ, բոլորից վախենում եմ, բայց գրված օրենքից չեմ վախենում:

Անշուշտ, օրենքներն են կառավարում աշխարհը: Ասացի ու կրակն ընկա, դե արի ու ապացուցիր՝ ինչպես են օրենքները կառավարում աշխարհը...

Օրենքներն են կառավարում աշխարհը՝ չգրված ու գրված օրենքները: Չգրված օրենքները կառավարում են աշխարհը, գրված են այն օրենքները, որ չգրված շատ օրենքներ են բացահայտում, ի ցույց դնում, մինչև կյանքը, մարդկային բանականությունը իրենից անկախ առաջացած բարոյական նորմերը փորձում է

օրենք դարձնել ու սահմանադրել: Չափանիշը գրված օրենքների ու չգրված օրենքների փոքր միջանցքն է: Կարծում եմ՝ մեր Սահմանադրությունն այդտեղ է: Տգետ փաստաթուղթ չենք թողնելու մեզնից հետո: Ժողովրդի բարոյական լիցքն այնքան մեծ է, այնուամենայնիվ, որ մի կերպ այս ամենից դուրս կգա, ինչ-որ կորուստների գնով թեկուզ:
Սահմանադրությունն իր նշանակությամբ անհրաժեշտություն է, որ քաղաքական կրքեր չբորբոքվեն ոչ մեզնից հեռու, ոչ էլ մեզ վրա իշխող ուժերը չկարողանան մղել քաղաքացիական ընդհարումների ու ցնցումների: Այսքանով, կարծում եմ, ճիշտ պիտի լինի, որ մեր կյանքը ինչ-որ կարգի մեջ դրվի Սահմանադրությամբ: Դասական դեմոկրատական հանրապետությունում հայկական ինչ-որ ազգային տարբերակ կառաջանա, այնուամենայնիվ, երկիրը աղետներից պետք է փրկել, իրավունք պիտի լինի, եթե սատանան ինձ գայթակղել է, իրավունք պիտի լինի իմ ձեռքը բռնելու ու իմ ձեռքը հատելու...
Երկիր, Ազգ, Պետություն, Հող, Մարդ և Կառույց՝ սա է Սահմանադրությունն ի վերջո, և սա է մեզ պետք ճանապարհ անցնելու ու տեղ հասնելու համար: